

ԿԱՐԾԻՔ

Հրածին Վարդանի Վարդանյանի «Ափիոքը ժամանակակից Պատմագիտական-Տեսական Դիսկուրսում (20րդ Դ. Վերջ - 21-րդ Դ. Սկիզբ)» ատենախօսութեան մասին:

Վարդանյանի ատենախօսութիւնը լաւատեղեակ ամբողջականութեամբ կը ներկայացնէ 1988-2018 էրեսնամեակի սփիոքագիտութեան պատմութիւնը՝ յատկապէս ընդգծելով անոր տեսական մարզի զարգացումն ու հոլովոյթը: Վերլուծական ամփոփումներով կը պարզէ ԱՄՆ-ի, ապա Բրիտանիոյ եւ Անգլիախօս աշխարհի կարկառուն մասնագետներուն զխաւոր վիճարկումները, ներառեալ (օրինակ) Հարաւ Աֆրիկեցի, անգլիագիր Բոպին Գոհրնի եւ Նիւ Զելանտացի տիրապետող դէմք Ալան Կամլէնի վաստակը, ապա նաեւ Իսրայէլացի սակայն Անգլերէնով հրատարակող մասնագետներ, օրինակ Կապի Շէֆֆըր եւ Եոսսի Շէլն: Նուազ մանրամասնօրէն բայց բաւականաչափ ծաւայով ներառնուած են Ֆրանսագիր Մթեֆան Տիֆուան եւ Միշէլ Պրիւսօն: Ափիոքահայ մասնագետներու համար մեծարժէք է Հայաստանէն եւ Ռուսաստանէն ցարդ գոնէ մասամբ անծանօթ բազմաթիւ մասնագետներու ուսումնասիրութիւններու ներկայացումը, Անգլիագիր մասնագետներու նկատմամբ նոյն շրջագծին մէջ:

Վարդանյան գիտական հանրութեան կը ներկայացնէ վերջին տասնամեակներու մասնագիտական այն նուաճումները որոնք պատմագիտական տւեալներու վրայ հիմնուած են եւ տեսական մօտեցումով մշակուած, ստեղծելով նոր սփիոքագիտութիւնը, որ բազմագիտակարգային տիւքուրս մըն է, նոր գիտական խօսույթ մը, արդէն գոյութիւն ոնեցողներու վրայ հիմնուած: Պատմուլենէն անդին, ուսումնասիրութիւնը կը ներառնէ քաղաքական գիտութիւններու եւ միջազգային կապերու ոլորտն ալ, երբեմն նաեւ սոցիոլոկային մօտեցումներու վրայ հիմնուած տեսութիւններ: Հոս կարելոր է ընդգծել ատենախօսութեան յատուկ

ատաքինութիւններէն մէկը, այն **հաւասարակշռութիւնը** որ ան կը ստեղծէ ու կը պահէ լայնատարած տեսական մտածումի, բայց նաեւ կոնկրետ առանձ-նայատկութիւններու վրայ սեւեռող մանրամասն վերլուծութիւններուն միջեւ: Այսպէս՝ Վարդանյան կը յաջողի խուսափիլ իր աղբիւրներու եւ յատկապէս Արեւմտեան ակադեմական աշխարհի ատենախօսութիւններու մէջ տարածուած տկարութիւնէն, այն անհաւասար կշռութիւնէն որ *կամ* կը կորսուի տեսութիւններու եւ ընդհանրացումներու ոլորտին մէջ, առանց պատշաճօրէն խարսխուելու իրավիճակներու թէ պատմական թէ այժմեական կոնկրետ ենթահողին, *կամ այ* ոչ միայն կը խարսխուի այն նաեւ կ'աւագախորտի իրականութեան յետին մանրամասնութիւններու թարկումին մէջ, հանգելով այն իրավիճակին որ Ամերիկեան Անգլերէնը կը նշէ իբր «ծառերը հաշուելով անտառը չի տեսնող»: Վարդանյան կը ցուցաբերէ ատենախօսութիւններու մակարդակին հազուադէպ գիտական մտքի առաքինութիւն մը տեսականի եւ կոնկրետի հաւասարակշռուած մշակումը:

Ատենախօսութիւնը կը սկսի ներկայացնելով երկու իրարու կայուած երեւոյթներ: Առաջինը սոցեալական է՝ հումանիտար գիտութիւններու մէջ Սփիւռք կոչուող հաւաքականութիւններու թիւին հսկայական ընդլայնումն է, տարբեր պատճառներով որոնք կը բացայայտէ: 1930-կան թուականներուն մասնագիտական համայնագիտաբանները կը նշէին երեք Սփիւռք .- Հրեական, Հայկական, Յունական, որոնց առաջինը կը համարուէր յարացուցական օրինակը «Սփիւռք» յղացքին: 1945-1964 շրջանին որդէգրուեցան Չինական ու յատկապէս Ամերիկեան սփիւռքներու յղացքները, տարբեր տեսական եւ այլ հիմքերու վրայ, ապա 1968-ին յաջորդող յիսնամեակի ընթացքին անհաւատալի արագութեամբ եւ երբեմն գիտական անփութութեամբ ընդլայնուեցաւ սփիւռքներու թիւն ու տեսակաւորումը: Վարդանյանի ատենախօսութիւնը օրինակելի հմտութեամբ կը ներկայացնէ ու կը վերլուծէ սփիւռք յղացքի մասին տեսաբաններու առաջարկած տիպաբանութիւնները, ներառելով եւ կարելորելով Հայկական նախկին գաղթաշխարհն ու ցրօնքը՝ գոր ներկայիս Սփիւռք կը կոչենք: Հմտութեամբ կը սեւեռի

այն եռակողմանի երևույթին վրայ որ յատկանշական է սփիւտքներուն – անոնց յարափոփոխ կապերը մէկ կողմէն Հայրենիքի, միւս կողմէն սփիւտքեան համայնքները պարփակող հիւրընկալ բազմազան երկիրներու հետ: Հոս փակագիծի մէջ կարժէ ընդգծել որ «հիւրընկալ» բառը Հայերէն գրող ամեն մասնագետի համար խնդրական է ներկայիս, քանի որ եթէ 1900 թուականին Միացեալ Նահանգներ գաղթող Հայը հազիւ թէ հանդուրժուած հիւր մըն էր, ներկայիս իր թոռները հիւր չեն այլ քաղաքացիներ, բնիկներ որոնք եթէ յօժարին կրնան ելլալ նաև: Հայ սփիւտքի անդամներ:

Ատենախօսութեան տեսական բայց նաև առարկայական իրականութիւններու վրայ հիմնուած արդիւնաբեր, հարուստ եւ խտացեալ վերլուծումը ամբողջովին մանրամասնել կարելի չէ հոս: Կրնանք հաստատել որ հեղինակը միշտ ալ հետաքրքրուած է ամեն տեսակի սփիւտքեան երևույթներու *քաղաքական* առնչութիւններով, կապուած թէ Հայրենիքի թէ ալ միջազգային յարաբերութիւններու պարագաներուն: Տպաւորիչ է նաև հեղինակին յաջող ճիգը, լուսաբանելու *անդրազգային* երևույթները: Հոս կարժէ ընդգծել տերմինաբանական, թերեւս պէտք է ըսել եզրույթային բարդութիւն մը որ ոչ միայն Հայերէնին այլ բոլոր լեզուներուն համար առկայ է եւ բոլոր վերլուծողներուն համար երբե՛ս ձուղակ: Սփիւտք յղացքի Յունարևն արմատն ու Եբրայերէն համագօրները ՆՔ Քրիստոսի Հինգերորդէն-Երրորդ դարերու մէջ կան արդէն: Ապա Անգլերէնը *International-միջազգային* բառը աւելցուցած է տասնիններորդ դարու սկիզբին, իսկ *Multinational* կամ *բազմազգային* յղացքը 1550-ական թուականներէն ի վեր կայ, սակայն յղացքին յատուկ եզրը, բառը կը գործածուի 1850-էն ի վեր, մինչ *Transnational* կամ *Անդրազգային* բառը նորեկ է եւ նորոյթ, կը յայտնուի իբրև տնտեսական աշխարհին յատուկ եզրույթ 1968-ին եւ կրեղիանրանայ միայն 1990 ական թուականներու սկիզբը, յետեւելով *Globalization*-ի կամ համաշխարհայնացման յղացքին: Վիճակը ալ աւելի կը բարդանայ Շէֆֆրի եւ Մայլզի *trans-state*, *անդրպետական* բառին յաւելումով, 1997-ին: Տերմինաբանական եզրույթային այս խճճուած իրավիճակին մէջ Վարդանյան կը նաւարկէ, կը խուսանաւ, կը մտածէ:

օրինակելի հաւասարակշռութեամբ, որոշակի զգուշութեամբ եւ յաջողութեամբ պեղելով «անդրագգ» նորամուտ բառը:

Ատենախօսութիւնը կը պարունակէ երկար ու բայալ վերլուծում Հայ Սփիւտքի քաղաքական յատկանիշներու մասին, անոր գործունէութեան մէջ վերնախաւի եւ քաղաքականօրէն առաջնորդ-ղեկավար տարրի դերին մասին, ապա նաև Հայաստանի եւ Սփիւտքի ոչ միայն տնտեսական ու մշակութային այլ նաև յատկապէս քաղաքական կապերու ցարդ անյաջող ժառանգ փորձառութեան մասին: Վարդանյանի հարուստ եւ պահանջկոտ վերլուծումը կը յանգի այն եզրակացութեան որ **պետութենակենդրոն**, ոչ միայն հայրենակենդրոն կամ Հայաստանակենդրոն Հայկական սփիւտք մը թէ՛ բաղձալի է, **թէ՛ ալ կարելի**: Ատենախօսութիւնը լաւատեղեակ է թէ՛ միջազգային, թէ՛ հայկական ուսումնասիրութիւններու լայն եւ ոչ միշտ համերաշխ եւ համամիտ ձիրքին, ուր կը սահմանուին, կը նկարագրուին, կը վերլուծուին եւ կարծւորուին Հայ եւ օտար սփիւտքներու բազմաթիվ այլազան քաղաքական գործունէութիւնները, ապա նաև հայրենի պետութեան քաղաքական դիրքի փոխակերպումները, յատկանշուած յանձնախումբերու, կոմիտէներու եւ նախարարներու գոյութեամբ, վերացումով կամ ուրիշ տարբեր կառոյցներով: Վարդանյանի վերլուծումի հիման վրայ կարելի է եզրակացնել որ Իսրայէլէն Իրլանտա, Մեքսիքայէն Թուրքիա, Հնդկաստանէն Չինաստան եւ այլուր, պետութիւններու համար ներկայիս առաջնահերթ է ստեղծել ու զօրացնել ոչ միայն հայրենակենդրոն ույլ նաև պետականակենդրոն սփիւտքներ: Առաջնահերթութիւն ուր հակառակ սփիւտքներու տնտեսական ներդրումի կարևորութեան առաջնահերթ կը ժամանակ քաղաքական հարցեր:

Վարդանյան լաւատեղեակ է հայրենի պետութիւններու գործունէութեան դրական եւ զօրաւոր կէտերուն եւ բաւական ճշգրտօրէն կը դատէ զանոնք: Սակայն այս պարագային հարցը կը կարօտի յաւելեալ պրպտումներու, research-ի եւ վերլուծումի:

Այս հարցին կապուած եւ Անգլերէնով գրուած նոյնիսկ ամենէն յաջող պրպատումները, որոնց յայտնօրէն ծանօթ է ու կը յղէ հեղինակը, տակաւին չեն արտադրած օրինակելի վերլուծում մը, այն ազդակներու եւ գործունէութեան ոճերու մասին որոնք կրնան յաջողեցնել պետութենակենդան Սփիւոքի մը ստեղծումս աւ տեւականացումը: Ոչ իսկ Հրէական սփիւոքի եւ Իսրայէլական պետութեան մասին կայ նման անսխալ ու համոզիչ վերլուծում եւ հաստատում: (Այլ խօսք որ նման Սփիւոք մը բաղձալի չի նկատուիր ամէն սփիւոքի մեծամասնութեան կողմէ:): Այս տողերը ստորագրողը իր դասախօսութիւններու ընթացքին երբեմն կ'ընդգծէ որոշ երեւոյթ մը, Հայը Հայ կը կոչէ սփիւոքահայն ալ, Հայաստանաբնակն ալ, Սակայն Սփիւոքաբնակ Հրեան իր Իսրայէլի պետութեան մեջ բնակող արենակիցը կը կոչէ Israeli, Իսրայէլացի եւ ոչ պարզապէս Jewish՝ Հրեայ: Այլ խօսքով անոնք կը գիտակցին, շնորհիւ իրենց գործածած լեզուներու տւրմիւնաբանական երկուութեան, որ Հրէական ինքնութիւնն ու հաւատարմութիւնները միաձուլ չեն ամենուրեք, եւ ուրեմն պետութիւնը պէտք է գիտակից ըլլայ այն տեւական, անդուլ աշխատանքին որ ստիպուած է մղել, ապահովելու եւ պահելու համար պետութենակենդան սփիւոք մը, որուն շրջապատն ու իրավիճակը ենթակայ են անդադար փոփոխութիւններու: Ատենախօսութեան ներքին տրամաբանութեան հետեւելով, ընթերցողը թերեւս կրնայ եզրակացնել որ Հայաստանի պետութիւնը պէտք է խուսափի Հայ բառին միատեսակ ինքնութիւն վերագրելէ եւ ամէն Հայէ նոյնանման նուիրում ակնկալէ: Պետութեան համար շատ աւելի պարզ եւ դիրին կրնայ ըլլալ Հայաստանակեդրոն սփիւոքի մը գոյացումը՝ եթէ ճգնի գայն ապահովել Հայաստանէն արտագաղթողներու մօտ, քան այն տարբեր ինքնութիւններով եւ հաւատարմութիւններով օժտուած ու կազմաւորուած սփիւոքաբնակներէ, տարբեր ձևերով ազգապատկան Հայ անձերէ:

Ատենախօսութեան առողջ վերլուծումները կ'երաշխատրուին այն երեւոյթով որ հեղինակը կը գիտակցի թէ սփիւոքը բարդ յղացք մըն է որ **կայուն** չէ, մէկ սահմանումով չի կրնար տեւականօրէն հաստատուիլ: Ճիշդ է, ունի երկու յատկանիշներ՝ որոնք

ընդհանրացած են: նախ և առաջ, սփիւռքները կը գոյանան երբ բնակչութիւն մը բրտութեամբ եւ ուրե՛ս ակամայ կը վտարուի, **կը ցրուի** իր երկրէն, բայց նաև, ըստ վերջին յիսնամեակի փոխուող սահմանումներուն, երբ զանգուածային արսազաղթ մը կը պարտադրուի տարբեր իրավիճակներու կողմէ: – օրինակ ոչ գինեալ բռնութիւն այլ համաճարակ, կամ սով, կամ յարատեւ անգործութիւն, ապագայի հանդէպ յոյսի չգոյութիւն են: Անշուշտ Վարդանյան կը գիտակցի որ մէկ բան է Եղեռնէ փրկուելով սփիւռք դառնալ եւ ապրիլ արհաւիրքի **հաւաքական յիշողութեամբ**, եւ տարբեր բան է ըլլալ սկիզբը գործաւոր եւ տուն վերադարձող պանդուխտ, ապա վերածուիլ ընտրովի սփիւռքի մը, ինչպէս օրինակ Ֆիլիփինցիները ԱՄՆ-ի մէջ: Բայց եւ այնպէս բոլոր սփիւռքներու սահմանումներուն **ամենէն կայուն բնորոշիչը իբր ցրուք սկսիլն է**: Ասոր յստակ օրինակը, ինչպէս անցողակիօրէն կը նշէ Վարդանյան, զնշուններն են, որոնք մինչեւ վերջերս կը գիտակցէին թէ շարժուն ցրուք են, բայց չունէին հայրենիքի հաւաքական յիշողութիւնը. շատեր չէին զիտակցիր նոյնիսկ թէ հիւսիս արեւմտեան Հնդկաստանը եղած է իրենց ծագման հայրենիքը:


Վարդանյան կը նշէ նաև բազմատեսակ սփիւռքներու միւս հասարակ յայտարարը. **տարբերութեան պահպանումը**. Կը նշէ որ տարբերութիւնը միշտ նոյնը չէ. բայց սփիւռք մը որքան ալ փոխուի կամ պետք է պահէ ամենազանազան զինք տարբերող յատկանիշ մը. կամ ստեղծէ նոր յատկանիշներ որոնք կը շարունակեն զինք տարբերել շրջապատող հասարակութենէն, ինչպէս Հնդկաստանի հսկայ եւ արագօրէն աճող Հնդկական սփիւռքները ներկայիս, արեւմտեան աշխարհի մէջ: Վարդանյան կաւելցնէ որ Հայ սփիւռքի եւ համայն Հայութեան պարագային «կը կարելոյդունի ... հայութեան **քաղաքակրթական հեռանկարին** առնչուող հարցեր:» Այս հաստատումը շարունակականօրէն չի յստակացուիլ ատենախօսութեան մէջ: Երբ այս կարելոր է օգտաշատ աշխատութիւնը գրքի վերածուելու ընթացքին մէջ ըլլայ, թերեւս կարելի կ'ըլլայ ընդլայնել եւ յստակացնել քաղաքակրթական հեռանկարներու հարցը, ապա նաև անոր կապուած **մշակութային** հարցեր: Մշակոյթը ներկայ է ատենախօսութեան

մէջ, բայց գործին զօրաւոր քաղաքական ուղուածութիւնը չարտօնէր որ զարգացուի անոր (եւ կրօնքի) դերերը սփիւտքեան փոփոխութիւններու կենսագրութեան վերլուծման մէջ: Յայտնօրէն Վայոյանայան ծանօթ է Գարիպեան կղզիներ ծնած ու Անգլիա հաստատուած սեւասուրբ Փոլ Կիլրոյի եւ Աթիւրթ Հոլլի վերլուծութեան ուր սեւամորթ ըլլալ սպիտակամորթ աշխարհի մէջ, գրեթէ անշքջանցելի, Լրաշխատորոշ տարբերութիւնն է, ապա եկրորդ ստրուկութեան հաւաքական անցեալը արհաւիրքի յիշողութիւնն է, բայց նաեւ կայ Լրրորդ գործօն մը, ինքնահաստատման, ինքնակարեւորման եւ ինքնաբնորոշումի նմանապէս զօրաւոր ազդակը, մշակութային ծիրը, յատկապէս երաժշտութիւնն ու պարը, որոնք թուայնացած մետիաներու շնորհիւ կը շրջագային ամենուրեք եւ կը բնորոշեն Ափրիկեան սփիւտքը, որուն հողային հայրենիքը պետութիւն մը չէ, այլ ամբողջ ցամաքամաս մը:


Ատենախօսութեան այս արձեւորումը փակելէ առաջ կարժէ ընդգծել անոր ընդհանուր **իրատեսութիւնը**: Կան գիտական վերլուծութեւր որոնք լուրջ ըլլալով հանդերձ կաւարտին յուսախաբութեան դատապարտուած յուսադրիչ, նոյնիսկ վարդագոյն հեռանկարներով: Միւս կողմէն կան ուրիշներ որոնք կը հաստատեն կամ գոնէ կը ներնիշեն որ այս կամ այն սփիւտքը դատապարտուած է կորսուելու: Վարդանյանի մօտեցումը վարդագոյն ապագայ հեռանկար չտեսնելով հանդերձ, յստակատեսութեամբ կը պարզէ վերլուծում մը՝ ըստ որուն շատ բան կարելի է իրականացնել Ափիւտք-Հայաստան կապերով, միայն թէ մօտակայ անցեալի, 1998-2018-ի սխալները չկրկնուին: Այդ ձախողութիւնները կը վերագրէ ոչ ամբողջութեամբ սակայն մեծ մասամբ **-կազմակերպական թերութիւններու եւ միասնական քաղաքականութեան բացակայութեան**: Սա բոլորովին ճիշդ է, թէեւ բոլորոյսին բաւարար ալ չէ: Թէ՛ Ափիւտքի կազմակերպութիւնները (որոնք պէտք չէ մոռանանք, լաւագոյն պայմաններուն կը ներկայացնեն սփիւտքահայութեան ոչ աւելի քան քսանհինգ տոկոսը), թէ՛ ալ Հայաստանի պետական իշխանութիւնները ցուցաբերեցին նման թերութիւններ:

Ապագայի կարելի յաջողութիւնները Սփիւռք-Հայաստան գործունէութեան առանցքին վրայ, կրնան նուաճուիլ նախ եւ առաջ այս ատենախօսութեան նման առողջ եւ ընդհանրապէս իրատես գիտական վերլուծութեքու վրայ հիմնուելով: Երկրորդ, ատենախօսութեան նախընտրած ու նախատեսած պետականակենդրոն սփիւռքի գոյացումը կը պահանջէ յաւելեալ ազդակ մը, պետութիւն մը որ այնքան բարձրորակ է որ կրնայ ինքզինքը համոզիչ ձեւով պարտադրել սփիւռքի մը որ ցանցային կապերու ստեղծումին պատրաստակամ է, սակայն կեդրոնաձիգ ըլլալ ձգտող պետութեան մը հանդէպ է եւ պիտի ժսայ պահանջկոտ: Մա հակում մըն է որուն մասին մի քանի անգամ յստակօրէն կարտայայտուի Վարդանյան, եւ որու բիրտ առկայութիւնը պէտք չէ անտեսուի մօտ ապագայի դեկավար վերնախաւին կողմէ:

Պաշտոնական ընդդիմախօս խաչիկ **Թէօլտօլեան**, Ուելլըն համալսարանի Հիւմանիտար գիտութիւններու եւ համեմատական գրականութեան փրոֆէսօր, ներկայիս թոշակառու: Հիմնադիր եւ քսանիւր տարի պատասխանատու խմբագիր **Diaspora: A journal of transnational studies** պարբերաթերթին:

Khachig Tololyan 
 Emeritus Professor
 College of Letters, Wesleyan University
 Founder and Editor, **Diaspora: a journal of transnational studies**
 Residence: 144 Power St., Providence, RI 02906 USA

State of Rhode Island, County of Providence
 On this 24 day of March, 2027, before me, the undersigned notary public, personally appeared Khachig Tololyan personally known to the notary through satisfactory evidence of identification which reads Khachig Tololyan to be the person whose name is signed on the attached document in my presence.

 My commission expires 3/24/2027

